Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

325
2276
V. 4. № 119
13586

# ՀԱՇԻՒ

## ՀԱՅՈՒՀԵԱՑ

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

**ԹԻՖԼԻԶՈՒՄ**

Սկսեալ ի 1-ն Մարտի 1889 ց-1-ն յունվարի 1890 ամի։

ԹԻՖԼԻԶ
Տպարան Մովսես Վարդանեանի
1889

13586

## Ա. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ընկերութեան պատուաւոր նախագահ՝ Նորին Սրբազնութիւն Տէր Մամբրէ եպիսկոպոս՝ վիճակաւոր Առաջնորդ թեմին Հայոց Վրաստանի և Իմէրէթի։

## I. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ատենապետուհի, Իշխանուհի Կատարինէ Բէհբութեան
Փոխ-Ատենապետուհի, Տ. Մարիամ Խատիսեան

Անդամք
- տ. Սոֆիա Բաբայեան
- տ. Կատարինէ Եւանդուլեան
- օր. Մարիամ Մուրադեան
- օր. Մարիամ Զիլիմախեան
- տ. Սոֆիա Քալանթարեան

Գանձապահ, տ. Վարվառէ Ռօտինեան
Ատենադպիր, Աղէքսանդր Քիշմիշեան

## II. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ

† Ադամեան (Ներսիսեան) Թամարա
Աբամելիքեան Եփրոսիմէ Կոյս
տ. Ալիխանեան Նադէժդա
տ. Ալիխանեան Կատարինէ
տ. Ալէլեան Վարվառէ
տ. Ազարէգեան Մարիամ
տ. Արամակլիսեան Նունէ
Արղութեան Կատարինէ Մայրապետ
Իշխ. Արղութեան Մարիամ
Իշխ. Արղութեան Մարիամ
Իշխ. Արղութեան Կատարինէ
տ. Աքիմեան Վարվառէ (Մոսկվայից)

† Բաղդոյեան Թէկղէ (Թէլաւից)
Իշխ. Բէհբութեան Վարվառէ
տ. Դաւթեան Մարիամ
տ. Եւանգուլեան Նունէ
տ. Էմինեան Աննա
տ. Էնակոլոփեան Նատալիա
տ. Թամամշեան Վարվառէ
տ. Թայիրեան Եղիսաբէթ
տ. Թայիրեան Կատարինէ
Թայիրեան Հռիփսիմէ Կոյս
տ. Լէոնոզեան (Մոսկվայից)
Խուբեան Փեփրոնիա Կոյս

տ. Ծովհաննեան Մայիա
տ. Ծովհաննեան Մարիամ
տ. Կամնարական Անննա
տ. Ղամբարեան Նունէ
տ. Մանթաշեան Դարիա
տ. Մէլիքեան Անննա
տ. Մեհրաբեան Կատարինէ
տ. Միրզոյեան Դարիա

տ. Նադիրեան Կատարինէ
տ. Նազարբէգեան Մինա
տ. Նազարբէգեան Նունէ
օր. Զիթախեան Մարիամ
տ. Զանումեան Մինա (Մոսկվայից)
† Ռօտինեան Կատարինէ
տ. Սարգսեան Եղիսաբէթ (Բագուից)
տ. Վարլամեան Վարվառէ

## III. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ

Իշխ. Աբամելիքեան Դարիա
տ. Աբիսողոմեան Նունէ
տ. Աբովեան Շուշանիկ
տ. Անանեան Մարիամ
տ. Ադէլխանեան Հեղինէ
տ. Ամիրեան Նունէ
օր. Ախվերդեան Մանեայ
օր. Ախվերդեան Անննա
տ. Ախնազարեան Մարթայ
Իշխ. Արղութեան Նադէժդա
Իշխ. Արղութեան Կատարինէ
Իշխ. Արղութեան Սոֆիա
տ. Աղամջանեան Կատարինէ
տ. Անանեան Օլգա
տ. Անտոնեան Անննա (Բագուից)
տ. Ամիրաղեան Անննա
տ. Ամիրեան Վարվառէ
տ. Արզումանեան Փառանձեմ
տ. Աւթանդիլեան Հեղինէ
օր. Աւթանդիլեան Եղիսաբէթ

—

տ. Բաբանասեան Թամարա
տ. Բաբայեան Սոֆիա
տ. Բալտազարեան Սոֆիա

օր. Բայսողոլեան Շուշանիկ
տ. Բատիեվսկայա Կատարինէ
Իշխ. Բէհբութեան Կատարինէ
Իշխ. Բէհբութեան Եղիսաբէթ
Իշխ. Բէհբութեան Եղիսաբէթ
Իշխ. Բէհբութեան Եղիսաբէթ
Իշխ. Բէգթաբէգեան Եղիսաբէթ
Իշխ. Բէհբութեան Անննա
տ. Բորիսեան Մարիամ
տ. Բայինդուրեան Վարվառէ

—

տ. Գարսոյեան Սոֆիա (Բագուից)
տ. Գէորգեան Նունէ
տ. Գէորգեան Սոֆիա
տ. Գէորգեան Եղիսաբէթ
տ. Գիրգիդեան Եղիսաբէթ

—

օր. Դաւթեան Կատարինէ
տ. Դէմուրեան Եղիսաբէթ
տ. Դօլուխանեան Եղիսաբէթ

—

տ. Եարալեան Կատարինէ
տ. Եարալեան Կատարինէ



տ. Եղիազարեան Կատարինէ
տ. Երիցեան Սրբուհի
տ. Եւանգուլեան Կատարինէ
տ. Եղիազարեան Եղիսաբէթ

—

տ. Զարգարեան Նունէ
օր. Զօհրաբեան Վարվառէ

—

տ. Էլիմիրզեան Սալոմէ
տ. Էնակոլոփեան Մարիամ
տ. Էնակոլոփեան Սոֆիա
տ. Էնակոլոփեան Եղիսաբէթ
տ. Էֆէնդեան Նունէ
օր. Էնֆիաճեանց Հռիփսիմէ

—

տ. Թամամշեան Անննա
տ. Թամամշեան Սալոմէ
տ. Թամամշեան Վարվառէ
տ. Թամամշեան Դարիա
Իշխ. Թումանեան Մարիամ
տ. Թամամշեան Սոֆիա
Իշխ. Թումանեան Անննա

—

տ. Իլինա Թամարա
տ. Իզմիրեան Սոֆիա
տ. Իզմայէլեան Անննա
տ. Իստամանեան Քալիա

—

տ. Խիթարեան Սալոմէ
տ. Խաչատրեան Մարիամ
տ. Խալաթեան Կատարինէ
տ. Խարազեան Վարվառէ
տ. Խատիսեան Մարիամ
տ. Խոսրովեան Սոֆիա
տ. Խանդամեան Նատալիա

տ. Խուդադեան Վարդուհի
տ. Խօջայեան Սոֆիա
Իշխ. Խօջամինասեան Սոֆիա

—

տ. Ծուրինեան Անննա
տ. Ծատուրեան Վարդուհի
տ. Ծովհաննեան Մարիամ
տ. Ծովհաննեան Սոֆիա
տ. Ծովհաննեան Մարիամ
տ. Ծովհաննեան Մարիամ
տ. Ծովհաննեան Լիւբա

—

տ. Կիրակոսեան Թամարա
տ. Կիրակոսեան Նունէ (Վլադկ.)
տ. Կրասիլնիկեան Անննա (Բագուից)
տ. Կրասիլնիկեան Եղիսաբէթ (Բագ.)
տ. Կուսիկեան Մարիամ

—

տ. Ղազարեան Սոֆիա (Ղարսից)
տ. Ղամբարեան Նունէ (Ռիգայից)
տ. Ղազարեան Սաթինիկ
տ. Ղլդճեան Սաթինիկ
տ. Ղորղանեան Անննա
տ. Ղարագեօզեան Մարիամ
տ. Ղարաջեան Նատալիա
տ. Ղորղանեան Եղիսաբէթ
օր. Ղորղանեան Վարվառէ

—

տ. Միրզեան Թէլիկ
տ. Մամիկոնեան Անննա
տ. Մէլիքեան Սոֆիա
տ. Մատինեան Աղէքսանդրա
տ. Մարկոսեան Մարիամ (Բագուից)
օր. Մատինեան Մարիամ
տ. Մարտիրոսեան Հայկանուշ

տ. Մէլիք-Բէգլարեան Նատալիա
տ. Մէլիք-Բէգլարեան Նունէ
տ. Մանդինեան Սոֆիա
տ. Մէլիքեան Մարիամ (Բագուից)
տ. Միրիմանեան Վերա
տ. Միրիմանեան Նատալիա
տ. Միրզոյեան Նունէ
տ. Մէլիք-Ղարագեոզեան Կատարինէ
տ. Միրիմանեան Նունէ
տ. Մութաֆեան Շողակաթ
օր. Մութաֆեան Մարիամ
տ. Մակարեան Մարիամ
տ. Մէլիքեան Մարիամ

—

տ. Յովհաննիսեան Մարիամ (Վլադ.)
տ. Յովհաննիսեան Դարիա
տ. Յովսէփեան Նունէ

—

տ. Շադինեան Վարվառէ
տ. Շամխարեան Եղիսաբէթ
տ. Շադինեան Եղիսաբէթ
տ. Շադինեան Քալիա
տ. Շահնազարեան Նատալիա
տ. Շահդինարեան Նատալիա
տ. Շխեան Աննա

—

տ. Չիթախեան Սոֆիա
օր. Չիթախեան Աննա

—

տ. Պաատեան Նատալիա

—

տ. Ռօտինեան Նատալիա
տ. Ռօտինեան Նատալիա
տ. Ռօտինեան Վարվառէ

տ. Սահակեան Ովսաննա
տ. Սալավեօվա Վարվառէ
տ. Սարուխանեան Եղիսաբէթ
տ. Սունդուկեան Սոֆիա
օր. Սալամբէկեան Նունէ
տ. Ստեփանեան Սոֆիա
տ. Սարուխանբէկեան Մարիամ
օր. Սուսանաճեան Կատարինէ
տ. Սուսանեան Նունէ

—

տ. Վարշամեան Կատարինէ

—

տ. Տէր-Ջանեան Սոֆիա
տ. Տէր-Դաւթեան Եղիսաբէթ
տ. Տէր-Մկրտչեան Կատարինէ
տ. Տէր-Գրիգորեան Վարվառէ
տ. Տէր-Գրիգորեան Նունէ
տ. Տէր-Յակովբեան Սոֆիա
տ. Տէր-Յովհաննիսեան Եփեմիա

—

տ. Փիրադեան Եղիսաբէթ
օր. Փսարեան Սոֆիա
տ. Փրիդոնեան Մարիամ
օր. Փրիդոնեան Վարվառէ

—

տ. Քալանթարեան Սոֆիա
տ. Քէփինեան Օլգա
տ. Քիշմիշեան Թամարա
տ. Քալանթարեան Մարիամ
տ. Քալանթարեան Սոֆիա
օր. Քալանթարեան Գայիանէ

—

օր. Օրբելի Կատարինէ

# Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

| ՄՈՒՏՔ | Առանձին Ռ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|
| **ա) Անցեալ տարուանից մնացածը՝** | | | | |
| I. Առեւտրական բանկում ընթացիկ հաշիւ | 1958 | 60 | | |
| Առ ձեռն գումար | 373 | 30 | 2331 | 90 |
| II. Տոկոսաբեր թղթերը ի գումարի 11,100 ռ., որ ընդունուած է եւ գնուած | — | — | 10268 | 84 |
| **բ) Նուիրաբերութիւններ՝** | | | | |
| Բագուաբնակ տ. Եղիսաբէթ Սարգսեանից ի յիշատակ հանգուցեալ իւր ամուսնոյ | 400 | — | | |
| Տ. Դարիա Յովհաննիսիանից ի յիշատակ վաղամեռիկ իւր որդւոյ | 25 | — | | |
| Անյայտ անձինքներից | 48 | 50 | 473 | 50 |
| **գ) Անդամակցական վճարներ՝** | | | | |
| Իսկական (161 անդամ) | 966 | — | | |
| Մշտական (6 անդամ) | 600 | — | 1566 | — |
| **դ) Պարահանդէսներից, կոնցերտներից եւ այլն** | | | | |
| Պ. Բաբայեանի դասախօսութիւնից | 42 | — | | |
| Պարահանդէսից վիճակախաղով | 821 | 58 | | |
| Ներկայացումից | 700 | 25 | 1563 | 83 |
| **ե) Տոկոսիք ընկերութեան գումարից՝** | | | | |
| Ընթացիկ հաշուից | 59 | 33 | | |
| Կտրօններից | 611 | — | 670 | 33 |
| զ) Ս. Նշան եկեղեցւոյ աշակերտուհիներից ուսումնական պիտոյքների վճար | 92 | — | | |
| Նոյն եկեղեցւոյ երեցփոխանից | 25 | — | 117 | – |
| է) Կարուձեւի դպրոցի պատուէրներից մուտք | 587 | 88 | | |
| Պատահական արդիւնք | 23 | — | 610 | 88 |
| Ընդամէնը՝ | — | — | 17602 | 28 |

Բացի սորանից ընկերութիւնն ունի երեք հատ Օսմանեան արծաթեայ դրամ, դպրոցական կահկարասիք եւ այլն իրեղէններ։

| ԵԼՔ | Առանձին Ռ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|
| **ա) Ընդհանուր ծախսերը** | | | | |
| Դիւանական ծախսեր | 39 | 79 | | |
| Մանր ծախսեր, յայտարարութիւններ եւ այլն | 74 | 10 | 113 | 89 |
| **բ) Նուիրատուութիւնք յօգուտ ուսումնարանաց, մասնաւոր անձանց և ընտանեաց։** | | | | |
| Յօգուտ չքաւոր ուսանողաց ուսման վճարը | 18 | — | | |
| « Զրկինեանց եկեղեցւոյ ուսումնարանի | 50 | — | | |
| « Նորաշէնի եկեղեցւոյ ուսումնարանի | 50 | — | | |
| Զրօհնէքին եւ Զատկին բաժանուեցաւ չքաւոր ընտանեաց | 200 | — | 318 | — |
| **գ) Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի ծախսեր.** | | | | |
| Աշակերտուհեաց համար դեղօրայք | 1 | 80 | | |
| Կահկարասիք | 38 | 75 | | |
| Վառելափայտ | 73 | 75 | | |
| Ուսումնական պիտոյք | 160 | 58 | | |
| Ձեռագործի նիւթեր | 95 | 50 | | |
| Վարժուհիների եւ ուսուցիչների ռոճիկ | 1558 | 16 | | |
| Աղախնու ռոճիկ | 90 | — | | |
| Մանր ծախս | 30 | 4 | 2048 | 58 |
| **դ) Ս. Նշան եկեղեցւոյ շինութեան նորոգութիւնը** | 136 | 70 | 136 | 70 |
| **ե) Կարուձեւի դպրոցի ծախսեր.** | | | | |
| Ուսուցչուհիների ռոճիկ | 501 | 39 | | |
| Բնակարանի վարձ | 472 | 88 | | |
| Կահկարասիք | 112 | 15 | | |
| Աղախնու ռոճիկ | 123 | — | | |
| Վառելափայտ | 74 | 75 | | |
| Մանր ծախս | 63 | 44 | | |
| Ձեռագործի նիւթեր եւ ցուցահանդէսի համար պատրաստած իրերի ծախսը | 312 | 58 | 1660 | 19 |
| զ) Թիֆլիզի դատաստանական պալատի վճռով Սերեբրեկեանցի կտակատանդ գումարից վճարուեցաւ | 68 | — | 68 | — |
| է) Տոկոսաբեր թղթեր | 190 | — | 190 | — |
| Գումար | — | — | 4535 | 36 |
| Անցեալ տարուայ մնացած տոկոսաբեր թղթերը | | | 10268 | 84 |
| Ընթացիկ հաշիւ Թիֆլիսի առեւտրական բանկում | | | 2497 | 33 |
| Առ ձեռն գանձարանում | — | — | 300 | 75 |
| Ընդամէնը | | | 17602 | 28 |

# ՕՐԱԳԻՐ

1889 ամի 26 Մարտի Ս. Նշան եկեղեցւոյ ուսումնարանում կայացաւ Հայուհեաց բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը ի ներկայութեան ընկերութեան 42 անդամի։ Ժողովին նախագահում էր ընկերութեան պատուաւոր նախագահ Նորին Սրբազնութիւն Տէր Արիստակէս եպիսկոպոս վիճակաւոր Առաջնորդ Թեմին Հայոց Վրաստանի եւ Իմէրէթի։ Սոյն ժողովը գումարուեցաւ կանոնադրութեան 29 յօդուածի զօրութեամբ՝ ընկերութեան տարեկան ելեւմտից հաշիւը եւ նախահաշիւը քննելու եւ հաստատելու համար։

Նախընթաց՝ այն է 3 Ապրիլի 1888 ամի ընդհանուր ժողովի օրագիրը կարդալուց յետոյ ընկերութեան անդամ օրիորդ Սանդուխտ Եղիազարեանցը յայտնեց որ նա այդ օրուայ վարչութեան անդամների ընտրութիւնը համարում է անվաւէր, որովհետեւ ընտրութեան եղանակը կանոնաւոր չէր, այսինքն նա չկատարուեցաւ քուէներով, ինչպէս առհասարակ ընդունուած է, այլ տոմսերով։ Սակայն Սրբազան նախագահը կարդալով կանոնադրութեան 26 յօդուածը, խնդրեց օրիորդից յետ առնուլ իւր բողոքը, քանի որ այդ յօդուածի զօրութեամբ նա իւր բողոքը պարտաւոր էր յայտնել իւր ժամանակին, ներկայացնելով վարչութեանը ընկերութեան 20 անդամի ստորագրութեամբ առանձին յայտարարութիւն նոր ժողով գումարելու մասին։ Բացի սորանից Նորին Սրբազնութիւնը խնդրեց ժողովականներից յայտնել թէ նոցանից որոնք էլի համաձայն են օրիորդ Եղիազարեանցի հետ, սակայն ոչ ոք ձայնակից եղաւ, ուստի օրիորդի բողոքը թողնուեցաւ առանց հետեւանքի եւ օրագիրը միաձայն հաւանութեամբ հաստատուեցաւ։

Վարչութեան կողմից տիկին Սոֆիա Բաբայեանցը կարդաց միամեայ գործունէութեան տեղեկագիրը։ Յիշելով անցեալ տարուայ ընտրութիւնների մասին, ազդարարեց ժողովականներին, որ նոր ընտրութիւնների պատճառաւ վարչութեան կազմակերպութեան մէջ փոփոխութիւն եղաւ. այն է

Ատենապետուհի ընտրուեցաւ Իշխանուհի Կատարինէ Բէհբութեանցն եւ Փոխ-Ատենապետուհի տիկին Մարիամ Խատիսեանցն եւ թէ վարչութեան անդամ օր. Փսարեանցի հրաժարուելու պատճառաւ հրաւիրուեցաւ նորա տեղ առաջին փոխանդամ օրիորդ Մարիամ Զիլթախեանցը։ Ուսումնական տարուայ վերջը Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցը կատարեց աւարտող աշակերտուհեաց պարգեւաբաշխութեան հանդէսը եւ ընկերութեան հանգուցեալ բարերարաց հոգեհանգիստը՝ ի ներկայութիւն խուռն բազմութեան։ Սոյն տարի դպրոցում աւարտեցին 11 աշակերտուհիք, որոնց բաժանուեցաւ ըստ սովորութեան մի մի աւետարան եւ աւարտման վկայագիրը։ 1888 ամի Ապրիլ ամսին վարչութիւնը՝ ստանալով տեղոյս Նահանգապետի թոյլտուութիւնը վերջապէս իրագործեց իւր վաղեմի ցանկութիւնը բանալով կար ու ձեւի դպրոցը՝ անկախ Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցից։ Ձեռագործի համար հրաւիրուեցաւ օրիորդ Նուշանիկ Սարգսեանցը, որին վարչութիւնը փոխարինաբար տուաւ 300 ռուբլի, որ գնայ արտասահման կատարելագործուելու իւր մանագիտութեան մէջ։ Սոյն պարտքը օրիորդը պարտական է վերադարձնել վարչութեանը երեք տարուայ ընթացքում իւր ստանալիք ռոճկից։ Նոյն դպրոցի համար նշանակուեցաւ կառավարիչ տիկին Վարվառէ Ռօտինեանցն, որին յանձնուեցաւ վարչութիւնից կազմուած մի հրահանգ, ուր մանրամասնաբար առաջ է բերուած թէ կառավարչի, թէ ուսուցչուհեաց եւ թէ աշակերտուհեաց պարտականութիւնները։ Դպրոցը բացուեցաւ առանձին հանդիսով Սեպտեմբերի 21-ն։ Այդ օրը բացի 8 հոգուց, որոնք տեղափոխուեցան Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցում աւարտածներից, մտան եւ այլ հայոց ծխական դպրոցներից 14 աշակերտուհիք։ Թէեւ վարչութիւնը մտադիր էր դպրոցի աշակերտուհիներին տալ եւ ճաշ, սակայն աւելորդ համարուեցաւ այն քանի որ սկզբում պատուէրներն այն չափով չէին ընդունուում, որ հարկաւոր լինէր թողնել նրանց ճաշից յետոյ էլ պարապելու։ Բայց վարչութիւնը ապագայում գուցէ իրագործէ իւր այդ մտադրութիւնը, եթէ գործը յաջող ընթացք ունենայ։ Վարչութիւնը ցանկանալով աւելի սերտ կապով կապել ընկերութեան փոխանդամներին եւ ծանօթացնել նրանց վարչութեան գործերին հրաւիրեց նոցա հերթով յաճախել Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցը. բացի սորանից առանձին ժողովներ էր կազմում նրանցից եւ վարչութեան անդամներից զանազան հարցերի քննութեան համար։ Այս կերպիւ նոքա ծանօթանում էին թէ ընկերութեան գործերին եւ թէ օգնում էին վարչութեանը յաջողութեամբ առաջ տանելու գործը։

1888 ամի Հոկտեմբերի 10-ն Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցը արժանացաւ Վեհափառ Հայրապետի այցելութեանն եւ դպրոցի տշակերտուհիք բաղդունեցան ներկայացնելու Նորին Օծութեան իւրեանց աստղնագործ մի բարձ



ու սիռոց։ Թէեւ այդ օրը վարչութեան բոլոր անդամները եւ փոխանդամները ներկայ էին գտնուում դպրոցում եւ ստացան Նորին Սրբութեան օրհնութիւնը, բայց եւ այնպէս Վեհափառ Հայրապետը բարեհաճեց յայտնել ցանկութիւնը եւ ուրիշ օր էլ տեսնել նրանց Իւր մօտ։ Վարչութեան անդամները եւ փոխանդամները շտապեցին նորից ստանալու Վեհափառի օրհնութիւնը եւ նոյն ամսուայ 12-ն երեկոյեան ներկայացան Նորին Օծութեան։ Վեհափառը օրհնեց ներկայ գտնուողներին, քաջալերեց նրանց, բարեհաճեցաւ յայտնել որ կը պատուիրէ քաղաքի քահանաներին ծանօթացնելու հայ հասարակութիւնը ընկերութեան Աստուածահաճոյ նպատակների հետ եւ յորդորելու նրան օգնելու ընկերութեանը դրամով։ Հայրապետական սոյն բարձր հրամանը սրտի ուրախութեամբ շուտով կատարուեցաւ եւ ընկերութիւնս ստացաւ ձեռամբ Շամքորեցւոց եկեղեցւոյ միաբան Տէր-Եմաւոն Տէր Բարսեղեանցի 25 ռ. ի յիշատակ հանգուցեալ Ղոնդախսազեանց Նատալիայի։ Բացի սորանից ընկերութիւնս ստացաւ պ. Կարապետ աղա Մութաֆեանից 1000 ր. արժողութեան մի հատ Թիֆլիզ քաղաքի փոխառութեան տոմսակ ի յիշատակ հանգուցեալ դստեր իւրոյ Գայիանէի եւ 100 ր. դրամով պ. Բագրատ Ալիբէկեանից ի յիշատակ հանգուցեալ եղբօր իւրոյ Յարութիւնի։ Վարչութիւնը թէեւ իւր ժամանակին յայտնել է պատուելի նուիրատուներին իւր անհուն շնորհակալութիւնը, բայց եւ այնպէս պարտք է համարում ընդհանուր ժողովի ներկայութեամբ եւս կրկնել յիշեալ անձանց իւր շնորհակալիքը։ Նոյնպէս յայտնում է իւր անկեղծ շնորհակալութիւնը ճարտարապետ պ. Նիկողայոս Գրիգորեանցին, որ շարունակում է ձրիապէս իւր դասատուութիւնը գծագրութիւնից Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցում։ բարեկրօն կոյս Հռիփսիմէ Թայիրեանցին, որ շարունակում է նուիրել 10 ր. սոյն դպրոցի աշակերտուհեաց դեղօրէից համար։ Տ. Սոֆիա Զիլթախեանցին, որ իմանալով թէ Վարչութիւնը մտադիր է ճաշ տալ կար ու ձեւի դպրոցի աշակերտուհիներին, շտապեց ուղարկել զանազան տեսակ ամաններ։ Իշխան Բէհբութեանցին, որ նուիրեց կանաչ մահուդ։ Բժշկապետ Դաւիթ Օրբելուն, որ շարունակում է ձրի բժշկել Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի աշակերտուհիներին։ Պ. Նիկողայոս Քարամեանցին որ իւր դասախօսութեան ամբողջ արդիւնքը յատկացրեց յօգուտ ընկերութեան. տ. Աննա Ղորղանեանցին, որ նուիրեց կար ու ձեւի դպրոցին ձեռագործի զանազան նիւթեր. պ. Եփրեմ Ծատուրեանցին, որ նուիրեց նոյն դպրոցի նորոգութեան համար մի քանի կտոր պաստառ. Ս. Նշան եկեղեցւոյ Երեցփոխան պ. Յովհաննէս Տէր Կարապետեանցին, որ միշտ ուրախութեամբ կատարում է վարչութեանս խընդիրներ դպրոցի վերաբերութեամբ։ Սրբազան Մկրտիչ Խրիմեանին եւ պ. Գրիգոր Շահբուդաղեանին, որոնք նուիրեցին դպրոցի գրադարանին իրանց

երկասիրած գրքերը։ Վերջապէս վարչութիւնը անուշադիր չպէտք է թողնէ տիկին Վառվարէ Ռոտինեանցի անձնուէր գործունէութիւնը յօգուտ ընկերութեան, որովհետեւ սա լինելով գանձապահ, միեւնոյն ժամանակ ձրիապէս վարում է կար ու ձեւի դպրոցի կառավարչի ծանր գործը։

Տիկին Ս. Երիցեանը յայտնելով իւր ջերմ շնորհակալութիւնը վարչութեան հասարակաօգուտ գործունէութեան համար, նկատեց միակերպութիւն դորա մէջ եւ խնդրեց բացատրել նորան թէ ինչու համար ցարդ վարչութիւնը չիրագործեց իւր վաղեմի ցանկութիւնը պատրաստել հայ հոգւով դաստիարակուած դայեակներ։ Սորան վարչութիւնը պատասխանեց որ դայեակներ պատրաստելու համար հարկաւոր է ունենալ առանձին թոյլտւութիւն, որովհետեւ այն առարկաները, որ պէտք է մատակարարել դայեակներին մուծուած չեն ծխական դպրոցների համար կազմուած ծրագրի մէջ, իսկ նրանց համար առանձին ուսումնարան բանալու համար վարչութիւնը ձեռնհաս չէ նիւթական միջոցների սակաւութեան պատճառով։ Սրբազան նախագահը համակրելով այդ խնդրին աւելացրեց որ եթէ ներկայ ծխական դպրոցների ծրագիրը բաւական է դայեակներ պատրաստելու համար, այն ժամանակ լաւ կը լինէր եթէ ազատ ժամերին աշակերտուհեաց հետ կարդալ նրանց պաշտօնին վերաբերեալ ընթերցանութեան գրքերը։ Տ. Բաբայեանը առաջարկեց գրքերի ընթերցանութիւնը կատարել կար ու ձեւի դպրոցում, սակայն շատերը անյարմար գտան այդտեսակ պարապմունքը յիշեալ դպրոցում։ Սրբազան նախագահը յայտնեց որ եթէ այդ հարցը ընդունուի սկզբունքով, այն ժամանակ կարելի է արգելքների առաջ առնել կազմելով մանաժողով որ կը քննէ այդ հարցը։ Ընդհանուր ժողովը որոշեց յանձնել այդ հարցը վարչութեանը քննելու։

Այնուհետեւ վարչութեան Ատենադպիրը կարդաց անցեալ 1888 ել եւ մտից հաշիւը, որից երեւեցաւ որ ընկերութիւնը ունեցել է մուտք՝ նուիրաբերութիւններից 1141 ռ. 49 կ., 159 իսկական եւ 6 մշտական անդամներից 1554 ռ. զանազան հանդէսներից 1167 ռ. 10 կ., տոկոսիք ընկերութեան գումարից 516 ռ. 74 կ., Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի արդիւնք 319 ռ. 62 կ., կար ու ձեւի դպրոցի արդիւնք 314 ռ. 45 կ. ընդամէնը տարուայ մէջ մուտք է եղել 5013 ռ. 40 կ. Նոյնպէս ունեցել է առ ձեռն դրամ 2775 ռ. 17 կ. եւ անձեռնմխելի գումար 8768 ռ. 84 համագումար՝ 16,557 ռ. 41 կ. Սոյն ժամանակամիջոցում ծախս է եղել՝ Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութեան համար 2107 ռ. 65 կ. սոյն դպրոցի շինութիւնը կրակից ապահովելու ծախսը 44 ռ. 42 կ., այլ եւ այլ ուսումնարանաց եւ ուսանողաց տուած է եւ ջրօրհնեաց եւ Զատկի տօներին բաժանած է 342 ռ., կար ու ձեւի դպրոցի պահպանութեան համար ծախսած է 1359 ռ. 45 կ., դիւանական



եւ այլ վարչական մանր ծախսերի համար գործ է դրած 103 ռ. 5 կ., ընդ ամէնը ծախս է եղած՝ 3956 ռ. 57 կ։ Առ 1-ն Մարտի 1889 թ. ունի առ ձեռն գումար 373 ռ. 30 կ., ընթացիկ հաշիւ առեւտրական բանկում 1958 ռ. 60 կ., անձեռնմխելի գումար արժէ տոմսերով 9768 ռ. 84 կ. գումար դրամոց 12600 ռ. 74 կ. համագումար ծախուց հետ՝ 16557 ռ. 41 կ։

Ատենադպիրը կարդաց նաեւ վարչութեան կազմած նախահաշիւը տասը ամսուայ համար այն է սկսեալ մարտի 1-ից մինչեւ յունվարի 1-ն 1890 թ.։ Թէեւ ամենայն տարի վարչութիւնը իւր հաշիւները վարում էր Մարտ ամսից մինչեւ Մարտ ամիսը, բայց բարւոք է համարում այսուհետեւ այդ հաշիւները կազմել Յունվարից ցՅունվար եւ կանոնադրութեան զօրութեամբ ընդհանուր ժողովը գումարել Փետրուարի սկզբներում։ Նախահաշիւում որոշուած էր մուտք ըստ հետեւելոյն՝ 2 մշտական եւ 170 իսկական անդամներից 1220 ռ., պարահանդէսից եւ այլն 1500 ռ., նուիրաբերութիւններից 150 ռ., ընկերութեան գումարի տոկոսիք 500 ռ., Ս. Նշան եկեղեցւոյ եւ կար ու ձեւի դպրոցների արդիւնք 550 ռ. գումար մտից 3920 ռ.։ Սոյն ժամանակամիջոցի համար սրոշուած է հետեւեալ ծախսերը՝ Ս. Նշան եկեղեցւոյ եւ կար ու ձեւի դպրոցների պահպանութեան 3122 ռ., այլ եւ այլ ուսումնարանաց օժանդակութեան եւ չքաւոր անձանց եւ ընտանեաց բաժանելու համար 500 ռ., դիւանական եւ այլ վարչական մանր ծախսերը 75 ռ. գումար ծախուց՝ 3697 ռ.։

Ընդհանուր ժողովը քննելով թէ՛ եւեւ մտից հաշիւը եւ թէ՛ նախահաշիւը երկուսն էլ միաձայն հաստատեց եւ Սրբազան Նախագահը օրհնելով ժողովականներին ժամի 1-ն զկնի ճաշու գոցեց նիստը։

13586